



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2005թ. փետրվարին /վերլուծություն/

2005թ. փետրվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 8040 գործարքներ, որոնց քանակը 2004թ. փետրվարի համեմատ աճել է 12.2%-ով, իսկ 2005թ. հունվարի համեմատ՝ 32.0%-ով:

2005թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2858 օտարման գործարքների 89.1%-ը կազմել են առուվաճառքները, 10.4%-ը՝ նվիրատվությունները և 0.5%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 34.3%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 40.1%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2005թ. փետրվարին, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը 2004թ. փետրվարի համեմատ նվազել է 7.3%-ով, իսկ 2005թ. հունվարի համեմատ աճել՝ 14.5%-ով: 2005թ. փետրվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 68.1%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2004թ. փետրվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 27.6%-ով, իսկ 2005թ. հունվարի համեմատ աճել՝ 10.3%-ով:

2005թ. փետրվարին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

/1ԱՄՆ դոլարը 2005թ. փետրվարին համարժեք է 473.00դրամ/

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2005թ. փետրվարին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		փետրվար 2004թ.	փետրվար 2005թ.	հունվար 2005թ.
Կենտրոն	350.0-970.0	427.2	530.4	519.5
Արաբկիր	250.0-560.0	335.2	424.0	414.8
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	206.0	261.2	256.8
Նոր-Նորք	115.0-300.0	169.2	233.5	228.7
Ավան	120.0-300.0	159.1	225.4	220.5
Էրեբունի	120.0-300.0	170.1	207.4	204.1
Շենգավիթ	120.0-350.0	180.1	250.7	247.5
Դավթաշեն	130.0-350.0	203.0	265.8	258.7
Աջափնյակ	120.0-350.0	180.0	247.6	243.1
Մալաթիա-Սեբաստիա	120.0-300.0	179.1	242.1	237.0
Նուբարաշեն	80.0-200.0	72.3	102.8	99.7
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	80.0-970.0	207.4	271.9	266.4

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. փետրվարին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 2.1% :

2005թ. փետրվարին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 409 բնակարաններ, որոնց քանակը 2004թ. փետրվարի համեմատ նվազել է 10.9 %-ով, իսկ 2005թ. հունվարի համեմատ աճել՝ 30.3%-ով:

2005թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2005թ. փետրվարին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			փետրվար 2004թ.	փետրվար 2005թ.	հունվար 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	40.0-95.0	63.1	77.1	76.2
	Այարան	20.0-50.0	27.4	39.2	39.2
	Թալին	20.0-50.0	25.2	32.8	32.8
Արարատ	Արտաշատ	40.0-88.0	54.8	64.5	63.7
	Մասիս	40.0-90.0	54.5	67.5	66.2
	Վեդի	30.0-70.0	31.7	43.1	42.9
	Արարատ	30.0-70.0	31.6	43.8	43.7
Արմավիր	Վաղարշապատ	50.0-150.0	85.0	117.5	114.5
	Արմավիր	40.0-100.0	45.8	73.9	72.1
	Մեծամոր	20.0-50.0	30.9	33.2	33.2
Գեղարքունիք	Սևան	20.0-55.0	30.7	37.9	37.6
	Գավառ	20.0-50.0	30.5	34.5	34.2
	Մարտունի	20.0-60.0	29.7	36.8	36.6
	Վարդենիս	10.0-45.0	17.3	17.9	17.7
	Ճամբարակ	13.0-45.0	17.8	18.1	18.1
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	62.2	68.8	67.5
	Ստեփանավան	20.0-55.0	33.4	37.0	37.0
	Սյիտակ	30.0-80.0	24.1	47.7	47.5
	Ալավերդի	15.0-40.0	25.6	26.7	26.5
	Տաշիր	15.0-50.0	19.4	25.5	25.5
Կոտայք	Աբովյան	45.0-180.0	84.5	120.0	116.5
	Նոր Հաճն	50.0-120.0	52.3	83.4	81.7
	Բյուրեղավան	30.0-100.0	35.2	51.4	50.7
	Եղվարդ	35.0-100.0	40.7	60.8	59.4
	Հրազդան	30.0-100.0	31.2	52.7	51.5
	Ծաղկաձոր	40.0-150.0	75.8	94.7	93.6
	Չարենցավան	30.0-85.0	31.1	45.9	45.8
Շիրակ	Գյումրի	40.0-120.0	72.1	79.2	78.7
	Արթիկ	20.0-45.0	25.3	31.6	31.6
	Մարալիկ	18.0-45.0	23.7	28.5	28.4
Սյունիք	Գորիս	25.0-100.0	29.8	42.8	42.7
	Կապան	20.0-60.0	29.6	34.9	34.9
	Սիսիան	20.0-60.0	27.6	38.8	38.8
	Մեղրի	18.0-80.0	25.2	26.2	26.1
	Ագարակ	18.0-80.0	25.1	25.2	25.2
	Քաջարան	13.0-40.0	18.5	19.9	19.9
Վայոց Ձոր	Վայք	30.0-80.0	35.4	43.7	43.7
	Եղեգնաձոր	40.0-100.0	47.0	59.5	58.8
	Ջերմուկ	40.0-120.0	41.2	65.8	64.8
Տավուշ	Դիլիջան	30.0-80.0	36.2	47.5	47.1
	Իջևան	40.0-100.0	40.4	59.5	59.5
	Բերդ	25.0-60.0	29.3	37.4	37.4
	Նոյեմբերյան	15.0-45.0	26.8	27.7	27.7

2005թ. փետրվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 1.0%:

2005թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 354 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 85, մյուս մարզերում միասին վերցրած՝ 269: 2004թ. փետրվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 27.2%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 12.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 30.8%-ով: 2005թ. հունվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 18.4%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 4.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 23.4%-ով:

2005թ. փետրվարին Երևան քաղաքի համայնքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Համայնքներ	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2005թ. փետրվարին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան շուկայական միջին գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		փետրվար 2004թ.	փետրվար 2005թ.	հունվար 2005թ.
Կենտրոն	255.0-1000.0	443.1	533.2	521.1
Արաբկիր	205.0-900.0	336.5	426.1	416.2
Քանաքեռ-Զեյթուն	140.0-360.0	207.7	263.4	257.9
Նորք-Մարաշ	120.0-550.0	320.6	353.4	352.9
Ավան	125.0-280.0	160.7	226.7	221.7
Էրեբունի	130.0-320.0	171.3	208.6	205.1
Շենգավիթ	120.0-350.0	181.8	253.1	248.2
Դավթաշեն	140.0-700.0	204.6	267.1	260.0
Աջափնյակ	125.0-320.0	181.8	249.7	243.8
Մալաթիա-Սեբաստիա	125.0-300.0	180.2	243.4	238.0
Նուբարաշեն	65.0-150.0	74.0	104.3	101.6
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	<b>65.0-1000.0</b>	<b>223.8</b>	<b>284.5</b>	<b>278.8</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. փետրվարին անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, ամսեկան աճը կազմել է 2.0%:

2005թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2005թ. փետրվարին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			փետրվար 2004թ.	փետրվար 2005թ.	հունվար 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	60.0-110.0	83.2	87.9	87.7

	Ապարան	25.0-60.0	38.9	41.3	40.5
	Թալին	20.0-65.0	28.1	35.2	35.2
Արարատ	Արտաշատ	50.0-90.0	61.9	65.8	64.8
	Մասիս	50.0-90.0	62.7	68.9	67.5
	Վեդի	25.0-70.0	36.3	49.4	49.4
	Արարատ	20.0-65.0	37.6	46.3	46.3
Արմավիր	Վաղարշապատ	80.0-130.0	90.0	118.7	115.9
	Արմավիր	35.0-90.0	52.5	75.8	73.9
Գեղարքունիք	Սևան	20.0-60.0	36.4	42.3	42.3
	Գավառ	20.0-60.0	39.9	39.9	39.9
	Մարտունի	20.0-60.0	33.9	41.1	41.1
	Վարդենիս	15.0-50.0	21.3	21.9	21.9
	Ճամբարակ	15.0-50.0	19.9	22.4	22.4
Լոռի	Վանաձոր	50.0-90.0	69.2	71.4	71.1
	Ստեփանավան	15.0-60.0	33.7	50.6	50.4
	Սպիտակ	20.0-60.0	25.1	50.2	50.2
	Ալավերդի	15.0-50.0	26.0	30.0	30.0
	Տաշիր	15.0-55.0	19.9	28.5	28.5
Կոտայք	Աբովյան	70.0-130.0	92.8	121.3	119.2
	Նոր Հաճն	40.0-90.0	54.2	86.1	85.9
	Բյուրեղավան	25.0-70.0	38.2	53.0	51.9
	Եղվարդ	40.0-80.0	47.4	62.1	60.7
	Հրազդան	25.0-65.0	40.3	57.9	55.7
	Ծաղկաձոր	70.0-120.0	85.5	102.9	102.0
	Չարենցավան	25.0-65.0	33.4	49.3	48.5
Շիրակ	Գյումրի	60.0-120.0	91.2	92.4	92.3
	Արթիկ	20.0-55.0	28.7	33.5	33.5
	Մարալիկ	15.0-50.0	23.9	29.7	29.7
Սյունիք	Գորիս	20.0-60.0	31.7	44.2	44.2
	Կապան	20.0-60.0	31.2	36.9	36.7
	Միսիան	20.0-60.0	28.7	41.0	40.7
	Մեղրի	15.0-50.0	28.2	28.7	28.7
	Ագարակ	15.0-50.0	27.3	28.3	28.3
Վայոց Ձոր	Վայք	20.0-60.0	37.0	47.0	47.0
	Եղեգնաձոր	35.0-80.0	49.3	60.7	60.5
	Ջերմուկ	25.0-65.0	43.4	44.4	44.4
Տավուշ	Դիլիջան	20.0-70.0	39.2	58.2	58.2
	Իջևան	35.0-80.0	41.3	61.5	61.2
	Բերդ	20.0-60.0	30.9	38.9	38.7
	Նոյեմբերյան	20.0-60.0	30.8	31.1	31.1

2005թ. փետրվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, ամսեկան աճը կազմել է 0.9%:

Ընդհանուր առմամբ, 2005թ. փետրվարին հանրապետությունում օտարվել են 1032.74 հա /այդ թվում՝ 7.39 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 997.67 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում 1022.74 հա հողերի /այդ թվում՝ 7.28հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 989.18 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 10.00 հա /այդ թվում՝ 0.11 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 8.49 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Հողերի առուվաճառքների առավել մեծ մակերեսներ արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 586.62 հա, որից 582.21 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2005թ. փետրվարին մարզերում վաճառված հողերի միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը.

ԱՐԶԵ ՄԱՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	8	0.56	2	0.14	0	0.0	43	3.80	6	2.79
Արագածոտն	18	27.00	0	0.00	0	0.00	29	26.75	20	1.74	0	0.00
Արարատ	40	26.30	17	1.80	1	0.01	89	32.07	44	3.89	0	0.00
Արմավիր	88	462.55	0	0.0	28	0.25	119	119.66	39	4.16	0	0.00
Գեղարքունիք	7	46.70	1	0.10	1	2.00	4	10.67	7	1.00	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	2	0.05	25	16.01	3	0.41	0	0.00
Կոտայք	1	2.00	0	0.00	0	0.00	71	150.80	83	9.60	0	0.00
Շիրակ	25	5.39	0	0.00	4	0.04	24	14.58	7	0.47	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	27	31.07	3	0.30	0	0.00
Վայոց Ձոր	15	2.24	0	0.00	0	0.00	1	0.20	2	0.22	0	0.00
Տավուշ	0	0.0	0	0.00	0	0.00	27	15.19	3	0.22	1	0.02
<b>Ընդամենը</b>	<b>194</b>	<b>572.18</b>	<b>26</b>	<b>2.46</b>	<b>38</b>	<b>2.49</b>	<b>416</b>	<b>417.00</b>	<b>254</b>	<b>25.81</b>	<b>7</b>	<b>2.81</b>

2005թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են 935 միավոր հողերի առուվաճառքի գործարքներ /2004թ. փետրվարին՝ 676/ այդ թվում 610-ը գյուղատնտեսական նշանակության /338/ և 325-ը՝ բնակավայրերի հողերի նկատմամբ /336/:

2005թ. փետրվարին հողերի առուվաճառքներից 246 միավորը իրականացվել են աճուրդների միջոցով /2004թ. փետրվարին՝ 139/, այդ թվում 8-ը՝ /0.56 հա/ Երևանում /9/, իսկ 238-ը՝ /574.90 հա/ մյուս մարզերում /130/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 189 միավորը /570.70 հա/ հանդիսացել է գյուղատնտեսական /2004թ. փետրվարին՝ 37/, 26-ը՝ /2.46 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /93/ և 31-ը՝ /2.30 հա/ հասարակական կառուցապատման հողեր /9/:

2005թ. փետրվարին հանրապետությունում արձանագրված 610 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքներից 189-ն իրականացվել են աճուրդների, 6-ը՝ դատարանի վճիռների և 5-ը՝ ուղղակի վաճառքի միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	18	27.00	90.0	275.0	160.0	20	5.73	800.0	10000.0	3410.0

Ապարան								200.0	1700.0	620.0
Թալին						9	21.01	200.0	1680.0	430.0
Ծաղկահովիտ								170.0	2100.0	265.0
Արարատի մարզ										
Արտաշատ	40	26.30	20.0	29070.0	2500.0	48	15.72	740.0	12000.0	2285.0
Մասիս						12	3.81	400.0	8800.0	2180.0
Վեդի						29	12.54	450.0	7200.0	1510.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	0.20	70.0	70.0	70.0	66	56.19	650.0	4650.0	1390.0
Բաղրամյան	24	392.71	40.0	760.0	190.0	11	45.44	200.0	1500.0	750.0
Վաղարշապատ	63	69.65	45.0	6610.0	675.0	42	18.04	980.0	14000.0	2250.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	0.27	420.0	1100.0	650.0
Ճամբարակ	7	46.70	260.0	2000.0	690.0			100.0	500.0	220.0
Մարտունի								100.0	4000.0	810.0
Սևան								100.0	1000.0	385.0
Վարդենիս						3	10.40	60.0	1180.0	275.0
Լոռու մարզ										
Ալավերդի						9	3.32	360.0	5500.0	850.0
Գուգարք								500.0	6000.0	1800.0
Սպիտակ								500.0	3300.0	1000.0
Ստեփանավան						14	11.81	180.0	4000.0	500.0
Տաշիր						2	0.88	100.0	400.0	300.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	1	2.00	95.0	95.0	95.0	21	8.64	600.0	20000.0	5320.0
Եղվարդ						50	142.16	380.0	10000.0	3660.0
Հրազդան								250.0	6000.0	1100.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						14	11.22	550.0	2500.0	730.0
Ամասիա								80.0	525.0	170.0
Անի								240.0	800.0	325.0
Աշոցք						9	3.25	60.0	210.0	190.0
Արթիկ	20	3.90	635.0	2790.0	905.0	1	0.11	140.0	800.0	290.0
Սյունիքի մարզ										
Գորիս						4	4.12	200.0	1600.0	570.0
Կապան						2	1.99	120.0	2000.0	430.0
Մեղրի						1	0.31	400.0	4240.0	850.0
Սիսիան						14	22.98	90.0	1500.0	320.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	15	2.24	130.0	760.0	680.0	1	0.20	260.0	4000.0	2450.0
Վայք								120.0	3400.0	950.0
Տավուշի մարզ										
Բերդ						13	3.78	100.0	2000.0	660.0
Իջևան								530.0	4000.0	1500.0
Նոյեմբերյան						14	11.41	100.0	8340.0	760.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2005թ. փետրվարին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են 229 միավոր բնակելի կառուցապատման հողերի առուվաճառքի գործարքներ, որից 18-ը՝ աճուրդային վաճառքներ և 2-ը՝ դատարանի վճռով գործարքներ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						16	13400.0	250.0	8000.0	3700.0
Ապարան						2	2180.0	250.0	1400.0	340.0
Թալին						2	1805.0	100.0	800.0	140.0
Ծաղկահովիտ								100.0	800.0	140.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	17	18010.0	320.0	535.0	510.0	12	12286.0	300.0	6000.0	1270.0
Մասիս						21	15510.0	300.0	20000.0	1520.0
Վեդի						11	11120.0	250.0	2200.0	920.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						16	20706.0	300.0	5000.0	1380.0
Բաղրամյան						1	1200.0	180.0	600.0	230.0
Վաղարշապատ						22	19667.0	300.0	10000.0	2100.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						4	3963.0	300.0	2000.0	630.0
Ճամբարակ	1	1000.0	225.0	225.0	225.0			100.0	300.0	160.0
Մարտունի						2	2400.0	200.0	600.0	270.0
Սևան								200.0	2000.0	260.0
Վարդենիս						1	3620.0	100.0	300.0	120.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի								150.0	600.0	210.0
Գուգարք						1	700.0	150.0	5200.0	860.0
Սպիտակ								140.0	900.0	190.0
Ստեփանավան						1	904.0	100.0	600.0	160.0
Տաշիր								100.0	300.0	135.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան						32	29069.0	300.0	10000.0	2540.0
Եղվարդ						46	55170.0	300.0	10000.0	2800.0
Հրազդան						5	11790.0	300.0	8000.0	1810.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						6	3026.9	250.0	3400.0	470.0
Ամասիա								100.0	300.0	135.0
Անի								150.0	400.0	185.0
Աշոցք								90.0	300.0	120.0
Արթիկ						1	1680.0	150.0	900.0	220.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						2	2560.0	150.0	1200.0	400.0
Կապան								150.0	1400.0	410.0
Մեղրի								150.0	900.0	230.0
Սիսիան								150.0	900.0	260.0
<b>Վայոց ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր						2	2200.0	150.0	2200.0	390.0
Վայք								170.0	1400.0	225.0
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ								100.0	1400.0	170.0
Իջևան						2	1800.0	150.0	2200.0	640.0
Նոյեմբերյան						1	380.0	100.0	1400.0	210.0



2005թ. փետրվարին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 7 գործարքներ 2.24 հա մակերեսով, ընդ որում 6-ը՝ Արարատի /1.93հա/ և 1-ը՝ Սյունիքի /0.31հա/ մարզերում:

2005թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 798 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.9%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 21.8%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. փետրվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 25.5%-ով, իսկ 2005թ. հունվարի համեմատ՝ 13.4%-ով:

2005թ. փետրվարին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 49 բնակարանների, 17 անհատական բնակելի տների, 220 հասարակական, 18 արտադրական նշանակության օբյեկտների, 489 միավոր հողերի և 5 ավտոտնակի վարձակալության գործարքներ:

2005թ. փետրվարին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 32 վարձակալության գործարքների քանակը 2004թ. փետրվարի համեմատ աճել է 77.8%-ով իսկ 2005թ. հունվարի համեմատ նվազել՝ 15.8%-ով:

Ընդհանուր առմամբ, 2005թ. փետրվարին հանրապետությունում վարձակալվել են 2711.08 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 1.85 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 2594.50 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 28.44 հա բնակավայրերի, 77.53 հա արդյունաբերական օբյեկտների և 7.77 հա հատուկ պահպանվող տարածքների հողեր: Հողերի վարձակալության առավել մեծ մակերեսներ են արձանագրվել Արմավիրի մարզում՝ 857.28 հա, որից 852.90 հա գյուղատնտեսական նշանակության:

2005թ. փետրվարին համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1070.40 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2005թ. փետրվարին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	1	301.00	50	90.37
Արարատ	2	210.00	14	114.49
Արմավիր	0	0.00	9	852.90
Գեղարքունիք	11	180.40	53	174.98
Լոռի	0	0.00	17	23.36
Կոտայք	0	0.00	35	65.44
Շիրակ	1	80.00	61	126.53
Սյունիք	3	299.00	10	41.69
Վայոց Ձոր	0	0.00	14	34.33
Տավուշ	0	0.00	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>18</b>	<b>1070.40</b>	<b>263</b>	<b>1524.09</b>

2005թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 610 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.6%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների

պետական գրանցումների քանակը 2004թ. փետրվարի համեմատ աճել է 22.7%-ով, իսկ 2005թ. հունվարի համեմատ՝ 2.1 անգամ: Ընդ որում գրավադրման գործարքների 24.1%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /43.0%/, հողերի /23.4%/, հասարակական նշանակության օբյեկտների /17.2%/ և առանձնատների /11.6%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 274 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. փետրվարի համեմատ աճել է 24.5%-ով, իսկ 2005թ. հունվարի համեմատ՝ 56.6%-ով:

Ընդհանուր առմամբ, 2005թ. փետրվարին հանրապետությունում գրավադրվել են 125.90 հա /այդ թվում 0.44 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 125.10 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ մակերեսներ են գրավադրվել Արարատի մարզում՝ 48.15 հա, որից 47.89 հա գյուղատնտեսական նշանակության:

2005թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 13 և 6 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.2%: 2004թ. փետրվարի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 36.7%-ով, իսկ 2005թ. հունվարի համեմատ՝ 17.4%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 21.1%:

2005թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1373 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2004թ. փետրվարի համեմատ աճել է 12.4%-ով, իսկ 2005թ. հունվարի համեմատ՝ 31.9%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.1%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /37.8%/:

***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***